ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն սահմանադրական օրենքը սահմանում է կուսակցությունների իրավական կարգավիճակը, կարգավորում է կուսակցությունների ստեղծման, պետական գրանցման, կառուցվածքի, իրավունքների և պարտականությունների, գույքի ձևավորման, դրա աղբյուրների, ֆինանսական գործունեության, կուսակցությունների հանրային աջակցության, կուսակցությունների հաշվետվությունների և աուդիտի, միջազգային գործունեության, նրանց գործունեության նկատմամբ ֆինանսական վերահսկողության, գործունեության կասեցման, գործունեության վերսկսման, արգելման, վերակազմակերպման և լուծարման հետ կապված հարաբերությունները:

Հոդված 2. «Կուսակցություն» հասկացությունը

1. Կուսակցությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կամավոր միավորում է, որի նպատակը հանրաքվեներին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին մասնակցելու և հասարակության ու պետության քաղաքական կյանքին մասնակցության այլ ձևերով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը նպաստելն է:
2. Կուսակցությունը պետական գրանցման պահից ձեռք է բերում ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ:

Հոդված 3. Կուսակցությունների մասին օրենսդրությունը

1. Կուսակցությունների կազմավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, ինչպես նաև սույն օրենքին համապատասխան ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական այլ ակտերով:

Հոդված 4. Կուսակցությունների գործունեության սկզբունքները

1. Կուսակցությունները հավասար են օրենքի առջև՝ անկախ իրենց ծրագրային փաստաթղթերում արտացոլված գաղափարախոսությունից, նպատակներից, խնդիրներից և այլ հանգամանքներից:
2. Կուսակցության գործունեությունը հիմնվում է անդամության կամավորության, անդամների իրավահավասարության, սեռից, ռասայից, մաշկի գույնից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ

հանգամանքներից կախված խտրականության արգելման, կուսակցության անկախության, ինքնակառավարման, կոլեգիալության, գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքների վրա:

3. Կուսակցությունները, հաշվի առնելով կուսակցությունների գործունեության սկզբունքները, ինքնուրույն են որոշում իրենց ներքին կառուցվածքը, նպատակները, գործունեության ձևերն ու մեթոդները, կուսակցության մարմինների ձևավորման կարգը, որոնք չեն կարող հակասել ժողովրդավարական սկզբունքներին:

Հոդված 5. Կուսակցությունների ստեղծման և գործունեության սահմանափակումները

1. Արգելվում է այն կուսակցությունների ստեղծումը կամ գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով:

2. Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատություններում, պետական այլ կազմակերպություններում կուսակցությունների ստորաբաժանումների տեղակայումը:

3. Արգելվում է Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա կուսակցությունների կամ դրանց ստորաբաժանումների, ինչպես նաև հիմնարկների ստեղծումը կամ գործունեությունը:

4. Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական նախադպրոցական, դպրոցական և այլ ուսումնական հաստատությունների, պետական այլ կազմակերպությունների տեղակայումը կուսակցությանը սեփականության իրավունքով պատկանող շենքերում և շինություններում:

(5-րդ հոդվածը լրաց. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 6. Պետությունը և կուսակցությունները

1. Արգելվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց միջամտությունը կուսակցությունների գործունեությանը, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի:

2. Կուսակցությունների անդամները, որոնք Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոններ են զբաղեցնում, իրավունք չունեն իրենց ծառայողական (պաշտոնեական) դիրքը, ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված ֆինանսական, տեղեկատվական միջոցները, տարածքները, տրանսպորտային և կապի միջոցները, նյութական և մարդկային ռեսուրսները, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» օրենքով պետական պահպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող անվտանգության միջոցառումների, օգտագործելու հօգուտ կուսակցական շահերի: Նշված անձինք իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կաշկանդված չեն կուսակցության որոշումներով:

3. Կուսակցություններին անդամակցելը կամ չանդամակցելը անձի իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու կամ պետության կողմից նրան որևէ արտոնություն կամ առավելություն տրամադրելու հիմք չէ:

(6-րդ հոդվածը փոփ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

Հոդված 7. Կուսակցությունների ստեղծումը

1. Կուսակցությունը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նախաձեռնությամբ՝ հիմնադիր համագումարի որոշմամբ:

2. Հիմնադիր համագումարը իրավազոր է, եթե դրան մասնակցում է առնվազն 300 հիմնադիր:

(7-րդ հոդվածը փոփ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 8. Կուսակցության հիմնադիր համագումարի կողմից որոշումների ընդունումը

1. Կուսակցության հիմնադիր համագումարը որոշումներ է ընդունում կուսակցության հիմնադրման, կուսակցության ծրագրի ընդունման և կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար անձին (անձանց) լիազորելու մասին, իր կազմից ընտրում է ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններ:

2. Կուսակցության ստեղծման մասին որոշումը համարվում է ընդունված, եթե որոշմանը կողմ է քվեարկել կուսակցության հիմնադիր համագումարի մասնակիցների մեծամասնությունը, բայց ոչ պակաս, քան 300 հիմնադիր:

3. Կուսակցության ծրագրի և կանոնադրության հաստատման, պետական գրանցման համար լիազորված անձի (անձանց), ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման մասին որոշումներն ընդունվում են կուսակցության հիմնադիր համագումարին ներկա հիմնադիրների ձայների մեծամասնությամբ:

4. Հիմնադիր համագումարի կազմակերպիչները հիմնադիր համագումարի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման ժամանակի և վայրի մասին ծանուցում, ինչպես նաև կուսակցության կանոնադրության և ծրագրի նախագծերի հիմնական դրույթները:

(8-րդ հոդվածը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 9. Կուսակցության պետական գրանցման կարգը

1. Կուսակցության՝ որպես իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է պետական գրանցման պահից:

2. *(մասն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)*

3. Կուսակցության պետական գրանցումը կատարում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը՝ Արդարադատության նախարարությունը (այսուհետ՝ պետական լիազոր մարմին):

4. Պետական գրանցման նպատակով կուսակցությունը պետական լիազոր մարմին է ներկայացնում.

1) կուսակցության կանոնադրության առնվազն երկու օրինակ.

2) կուսակցության խնդիրներն ու նպատակներն արտացոլող ծրագրի առնվազն երկու օրինակ.

3) պետական գրանցման մասին դիմում՝ ստորագրված կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների կողմից՝ նրանցից յուրաքանչյուրի անձնագրային տվյալների և հաշվառման հասցեի նշումով.

4) հիմնադիր համագումարի արձանագրությունը, ինչպես նաև կուսակցության հիմնադրման, մշտապես գործող ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրության, կանոնադրության հաստատման ու ծրագրային փաստաթղթերի ընդունման, պետական գրանցման համար անձին (անձանց) լիազորելու մասին որոշումները.

5) *(կետն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)*

6) հիմնադիր համագումարում կուսակցության ստեղծման մասին որոշմանը կողմ քվեարկած հիմնադիրների անունները, ազգանունները, անձնագրերի պատճենները, ստորագրությունները.

7) կուսակցության ղեկավար մարմինների կազմի մասին տեղեկություններ (անուն, ազգանուն, անձնագրային տվյալներ, բնակության վայր).

8) կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի գտնվելու վայրի մասին տեղեկանք.

9) պետական գրանցման համար պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ.

10) առկայության դեպքում՝ տեղեկատվություն կուսակցության տարածքային ստորաբաժանումների վերաբերյալ:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերը պետական գրանցման համար ներկայացվում են կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում պետական լիազոր մարմինը մեկամսյա ժամկետում գրանցում է կուսակցությունը կամ սույն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում վերադարձնում է պետական գրանցման դիմումը կամ մերժում է կուսակցության պետական գրանցումը:

7. Կուսակցության պետական գրանցումից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, կուսակցության կանոնադրությունը և ծրագիրը համընդհանուր իրազեկման նպատակով պետական լիազոր մարմնի կողմից հրապարակվում են Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am:

(9-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 10. Կուսակցության պետական գրանցման դիմումը վերադարձնելը

1. Պետական գրանցման համար սույն օրենքով, ինչպես նաև «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքով սահմանված պահանջների չպահպանման դեպքում պետական լիազոր մարմինը վերադարձնում է պետական գրանցման դիմումը: Կուսակցության պետական գրանցման դիմումը վերադարձնելու մասին պետական լիազոր մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված՝ նշում պարունակելով օրենքի այն դրույթների վերաբերյալ, որոնց պահանջները չեն պահպանվել:

2. Հայտնաբերված թերությունները շտկելու և պետական գրանցման դիմումը կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում կրկին պետական լիազոր մարմին ներկայացնելու դեպքում այն համարվում է ընդունված, և պետական տուրք կրկին չի գանձվում:

3. Պետական գրանցման դիմումը վերադարձնելը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

(10-րդ հոդվածը լրաց., փոփ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 11. Կուսակցության պետական գրանցումը մերժելը

1. Պետական լիազոր մարմինը մերժում է կուսակցության պետական գրանցումը, եթե՝

1) կուսակցության կանոնադրության կամ ծրագրի դրույթները ուղղված են Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի բռնի տապալմանը, կամ

2) կուսակցության հիմնադիրների թիվը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին, կամ կուսակցության հիմնադիր համագումարում որոշում չի ընդունվել կուսակցության հիմնադրման կամ կուսակցության ծրագրի ընդունման կամ կանոնադրության հաստատման մասին, կամ չեն ընտրվել կուսակցության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինները, կամ

3) կուսակցության պետական գրանցման դիմումը ներկայացվել է կուսակցության հիմնադիր համագումարի անցկացման օրվանից մեկ տարի անց:

2. Կուսակցության պետական գրանցումը մերժելու մասին պետական լիազոր մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված՝ հղում պարունակելով սույն օրենքի այն դրույթներին, որոնք մերժման հիմք են հանդիսացել:

3. Կուսակցության պետական գրանցման մերժումը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված ժամկետում չգրանցելը կարող են բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:

(11-րդ հոդվածը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Գ Լ ՈՒ Խ 3

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հոդված 12. Կուսակցության անդամները

1. Կուսակցությանն անդամակցությունը կամավոր է և անհատական:

2. Կուսակցության հիմնադիրներ և անդամներ կարող են լինել տասնութ տարին լրացած ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

3. Կուսակցության հիմնադիրները կուսակցության պետական գրանցումից հետո օրենքի ուժով դառնում են կուսակցության անդամներ:

4. Յուրաքանչյուր անձ կարող է միաժամանակ լինել միայն մեկ կուսակցության հիմնադիր:

5. Կուսակցությանն անդամակցությունը կատարվում է քաղաքացու դիմումի հիման վրա՝ սույն օրենքին համապատասխան՝ կուսակցության կանոնադրությամբ նախատեսված կարգով:

6. Կուսակցության անդամներն իրավունք ունեն ընտրելու և ընտրվելու տվյալ կուսակցության ու նրա տարածքային ստորաբաժանումների ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում, ներկա լինելու կուսակցության համագումարի նիստերին, ծանոթանալու կուսակցության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները, տեղեկատվություն ստանալու կուսակցության ու նրա ղեկավար մարմինների գործունեության վերաբերյալ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ կուսակցության կանոնադրության փոփոխությունների, գույքի կառավարումից ստացած դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու կուսակցության ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացությունը, բողոքարկելու կուսակցության մարմինների որոշումներն ու գործողությունները, կամովին դադարեցնելու իրենց անդամակցությունը:

7. Կուսակցության անդամները, կուսակցության կանոնադրությանը համապատասխան, կարող են ունենալ այլ իրավունքներ և պարտականություններ:

8. Իրենց կանոնադրական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կուսակցության անդամները կարող են կանոնադրությամբ

նախատեսված կարգով ենթարկվել կարգապահական պատասխանատվության, ընդհուպ՝ կուսակցությունից հեռացման:

(12-րդ հոդվածը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 13. Կուսակցությանն անդամակցելու արգելքները

1. 2015 թվականի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հիմնադիր կամ անդամ չեն կարող լինել դատավորները, դատախազները, քննիչները:

2. Օրենքով կարող են սահմանվել զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների կողմից կուսակցություն ստեղծելու և որևէ կուսակցության անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ:

3. Սահմանադրության համաձայն՝ իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում կուսակցության անդամ չեն կարող լինել Հանրապետության նախագահը, Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամները, Հաշվեքննիչ պալատի անդամները, Կենտրոնական բանկի խորհրդի անդամները:

Հոդված 14. Կուսակցության անվանումը

1. Կուսակցության անվանումը ներառում է «կուսակցություն» բառը:

2. Կուսակցության անվանումը կամ հապավումը չպետք է նույնական կամ շփոթելու աստիճան նման լինի գրանցված կուսակցությունների նախկին անվանումներին, գրանցված կուսակցությունների ու այլ հասարակական միավորումների, տվյալ կուսակցության գրանցմանը նախորդող հինգ տարվա ընթացքում «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով գործունեությունը արգելված կուսակցությունների, ինչպես նաև գրանցման գործընթացում գտնվող կուսակցությունների անվանումներին կամ դրանց հապավումներին:

3. Կուսակցության անվանումը չի կարող պարունակել անձնանուն կամ շփոթելու աստիճան նման անվանումներ և (կամ) դրանց հոլովաձևեր:

4. Կուսակցության անվանման մեջ չի թույլատրվում օգտագործել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների անվանումները կամ դրանց շփոթելու աստիճան նման անվանումներ:

5. Կուսակցության անվանումը չի կարող պարունակել վիրավորական կամ զրպարտչական բնույթի բառեր կամ այլ արտահայտություններ:

6. Կուսակցության անվանումը չպետք է խախտի քաղաքացիների և իրավաբանական անձանց մտավոր սեփականության իրավունքը:

7. Կուսակցություններ չհանդիսացող իրավաբանական անձինք, ինչպես նաև դրանց առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները չեն կարող իրենց անվանման մեջ օգտագործել «կուսակցություն» բառը:

8. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները օգտագործում են կուսակցության անվանումը՝ նշելով համապատասխան տարածքը:

(14-րդ հոդվածը խմբ. 14.07.22 ՀՕ-314-Ն)

(14.07.22 ՀՕ-314-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 15. Կուսակցության խորհրդանշանը և այլ խորհրդանիշերը

1. Կուսակցությունները կարող են ունենալ խորհրդանշան և այլ խորհրդանիշեր, որոնց նկարագրությունը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ:

2. Կուսակցության խորհրդանշանը և այլ խորհրդանիշերը չեն կարող նույնական կամ շփոթելու աստիճան նման լինել Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության դրոշին կամ զինանշանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև գործող կուսակցությունների ու հասարակական այլ միավորումների, միջազգային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության տարածքում արգելված կազմակերպությունների կամ կուսակցությունների խորհրդանշաններին և այլ խորհրդանիշերին:

3. Կուսակցության խորհրդանշանը և այլ խորհրդանիշերը չեն կարող պարունակել վիրավորական կամ զրպարտչական բնույթի բառեր կամ այլ արտահայտություններ:

4. Կուսակցության խորհրդանշանը և այլ խորհրդանիշերը չպետք է խախտեն քաղաքացիների և իրավաբանական անձանց մտավոր սեփականության իրավունքը:

Հոդված 16. Կուսակցության կանոնադրությունը

1. Կուսակցությունը, նրա կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումները գործում են կուսակցության կանոնադրության հիման վրա, որի դրույթները չպետք է հակասեն Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին, օրենքներին և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերին:

2. Կանոնադրությունում սահմանվում են կուսակցության՝

1) անվանումը, ներառյալ՝ անվանման հապավումը, ինչպես նաև խորհրդանշանի, այլ խորհրդանիշերի նկարագրությունը (եթե դրանք առկա են).

2) կուսակցությանն անդամակցելու և անդամությունը դադարեցնելու պայմաններն ու կարգը.

3) անդամների իրավունքները և պարտականությունները.

4) կառուցվածքը, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքները և պարտականությունները, գործունեության ժամկետները և որոշումներ ընդունելու կարգը.

5) կուսակցության անդամների, ներառյալ՝ պատվիրակների միջոցով, համագումարին մասնակցության կարգը.

6) *(կետն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)*

7) *(կետն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)*

8) կանոնադրությունում և ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու կարգը.

9) կուսակցության անդամների նկատմամբ կիրառվող կարգապահական պատասխանատվության միջոցները, դրանց կիրառման հիմքերն ու կարգը, դրանք կիրառող իրավասու մարմինները:

10) *(կետն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)*

3. Կուսակցության կանոնադրությամբ սահմանվում է նաև Ազգային ժողովի ընտրություններին և համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների ձևավորման կարգը: Ընտրական ցուցակների ձևավորման կարգը պետք է արտացոլի «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով ընտրական ցուցակներին ներկայացվող պահանջները: Ընտրական ցուցակների ձևավորման ժամանակ առնվազն հաշվի են առնվում կուսակցությունների անդամների, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների ներկայացրած առաջարկությունները:

4. Կուսակցության կանոնադրությունը կարող է պարունակել նաև իր գործունեությանը վերաբերող այլ դրույթներ: Տարածքային ստորաբաժանումների առկայության դեպքում կուսակցության կանոնադրությունը պետք է սահմանի նաև դրանց ստեղծման և գործունեության դադարեցման կարգը, ղեկավար և վերահսկողություն իրականացնող

մարմինների ձևավորման և կազմալուծման կարգը, իրավունքներն ու պարտականությունները և դրանց գործունեության ժամկետները:

(16-րդ հոդվածը փոփ. 18.06.20 ՀՕ-334-Ն, խմբ., փոփ., լրաց. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 17. Կուսակցության ղեկավար մարմինները

1. Կուսակցության բարձրագույն ղեկավար մարմինը կուսակցության համագումարն է (համագումար, ժողով, համաժողով, վեհաժողով և այլն), որը հրավիրում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը կուսակցության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում, բայց ոչ ուշ, քան երեք տարին մեկ անգամ: Կուսակցության անդամների նախաձեռնությամբ, որոնց նվազագույն թիվը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ, ինչպես նաև կանոնադրությամբ սահմանված այլ դեպքերում և կարգով կարող է հրավիրվել նաև արտահերթ համագումար: Կուսակցության համագումարում ընտրվում են կուսակցության կանոնադրությամբ սահմանված մարմինները, որոնք հաշվետու են համագումարին:

2. Կուսակցության համագումարն իրավասու է քննարկելու իր որոշմամբ սահմանված ցանկացած հարց, որի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը օրենքով կամ կանոնադրությամբ վերապահված չէ այլ մարմնի:

3. Կուսակցության համագումարի բացառիկ իրավասություններն են՝

1) կուսակցության կանոնադրության հաստատումը և ծրագրի ընդունումը, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելը.

2) ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրությունը.

3) մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրությունը.

4) կուսակցության վերակազմակերպումը.

5) Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն առաջին երեք տասնյակի հաստատումը, իսկ դաշինքով ընտրություններին մասնակցելու դեպքում՝ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում թեկնածուների՝ առնվազն երեք տասնյակի հաստատումը:

4. Կուսակցության անունից այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում հանդես է գալիս կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարը՝ առանց լիազորագրի, եթե կուսակցության կանոնադրությամբ նախատեսված է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոն, ինչպես նաև մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից լիազորված անձը:

4.1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը ձևավորվում է կոլեգիալության սկզբունքով, որի անդամները կուսակցության կազմից ընտրվում են համագումարում՝ կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետով: Մշտապես գործող ղեկավար մարմինը որոշումներ է ընդունում նիստերի արդյունքում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը՝

1) հաստատում է կուսակցության տարեկան բյուջեն, եթե այդ իրավասությունը կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ կուսակցության համագումարին.

2) հաստատված տարեկան բյուջեի հիման վրա հաստատում է կուսակցության ծախսերի նախահաշիվը.

3) կուսակցության անունից կնքում է քաղաքացիաիրավական գործարքներ.

4) փոփոխություններ է կատարում համագումարի կողմից Ազգային ժողովի ընտրությունների համար հաստատված ընտրական ցուցակներում, եթե համագումարի կողմից հաստատվելուց հետո կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առաջացել է կուսակցության կամքից անկախ պատճառներով.

5) որոշում է կայացնում կուսակցության լուծարման մասին, եթե համագումարն իրավազոր չի եղել.

5.1) հաստատում է Ազգային ժողովի հերթական ընտրություններում կուսակցության և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները թեկնածուների այն մասով, որոնց հաստատումը սույն օրենքով և կուսակցության կանոնադրությամբ վերապահված չէ համագումարին, ինչպես նաև արտահերթ ընտրություններում՝ կուսակցության և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակները.

6) իրականացնում է օրենքով և կանոնադրությամբ վերապահված այլ իրավունքներ։

6. Կուսակցության կանոնադրությամբ կարող են նախատեսվել նաև կուսակցության այլ մարմիններ։

7. Կուսակցության՝ օրենքով սահմանված ղեկավար մարմիններն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ՝ սույն օրենքով և կուսակցության կանոնադրությամբ սահմանված կարգով։

(17-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն, լրաց., խմբ. 07.05.21 ՀՕ-203-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 18. Կուսակցության համագումարում որոշումների ընդունման կարգը

1. Կուսակցության համագումարին ձայնի իրավունքով մասնակցության, ներառյալ՝ պատվիրակների մասնակցության կարգը սահմանվում է կուսակցության կանոնադրությամբ։

2. Կուսակցության համագումարն իրավազոր է, եթե համագումարին ներկա է կուսակցության անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը, իսկ համագումարին պատվիրակների մասնակցության դեպքում՝ պատվիրակների ընդհանուր թվի առնվազն կեսը, բայց ոչ պակաս, քան 100 պատվիրակ։

3. Կուսակցության համագումարի որոշումները, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող ներկաների ձայների մեծամասնությամբ։

4. Կուսակցության կանոնադրությունում և ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմինների ընտրության, մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի ընտրության, կուսակցության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումներն ընդունվում են համագումարում ձայնի իրավունք ունեցող մասնակիցների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ։

(18-րդ հոդվածը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 19. Կուսակցության տարածքային ստորաբաժանումները

1. Կուսակցությունները կարող են իրենց կանոնադրությամբ սահմանված կարգով ունենալ տարածքային ստորաբաժանումներ։ Կուսակցության տարածքային ստորաբաժանումները ենթակա են պետական հաշվառման՝ օրենքով սահմանված կարգով։ Տարածքային ստորաբաժանումների պետական հաշվառման համար պետական տուրք չի գանձվում։

2. Կուսակցության ղեկավար մարմիններն ու նրա տարածքային ստորաբաժանումները կարող են գտնվել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում։ Այլ պետություններում կուսակցությունը կարող է ունենալ միայն ներկայացուցչություններ։

(19-րդ հոդվածը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

ԳԼՈՒԽ 4

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՁԵՎԱ ՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հոդված 20. Կուսակցության, կուսակցությունների դաշինքի բացառիկ իրավունքները

1. Կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները բացառիկ իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով առաջադրելու Ազգային ժողովի պատգամավորի, ինչպես նաև համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանու անդամի թեկնածուներ:

(20-րդ հոդվածը փոփ. 18.06.20 ՀՕ-334-Ն)

Հոդված 21. Կուսակցության իրավունքները

1. Կուսակցությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով՝

1) մասնակցելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, ինչպես նաև հանրաքվեների նախապատրաստմանն ու անցկացմանը.

2) օրենքով սահմանված կարգով ընտրական գործընթացում հավասար և ոչ խտրական պայմաններով օգտվելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնադրած զանգվածային լրատվության միջոցներից.

3) հիմնադրելու զանգվածային լրատվության միջոցներ և հրատարակչություններ.

4) ազատորեն տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին, քարոզելու իր գաղափարներն ու նպատակները.

5) կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

6) առանց իրավաբանական անձ կազմավորելու այլ կուսակցությունների հետ ստեղծելու դաշինքներ (միավորումներ).

7) հաստատելու և պահպանելու միջազգային կապեր այլ պետությունների կուսակցությունների և հասարակական միավորումների, միջազգային կազմակերպությունների հետ, դառնալու միջազգային միությունների անդամ.

7.1) իր գործունեության ֆինանսավորման, այդ թվում՝ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման նպատակով ստանալու վարկեր Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերից, վարկային կազմակերպություններից, ինչպես նաև ներդնել ավանդներ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերում.

8) իրականացնելու օրենքով չարգելված այլ գործունեություն:

2. Կուսակցությունն իրավունք ունի, իր կանոնադրային նպատակներին համապատասխան, տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները: Կուսակցության կողմից իր գույքի վաճառքի կամ վարձակալության գինը չպետք է էականորեն գերազանցի պայմանագրի կնքման պահին համանման գույքի վաճառքի կամ վարձակալության համար գործող շուկայական գինը: Կուսակցության կողմից իր գույքը համանման գույքի համար շուկայական գնից էականորեն բարձր գնով վաճառվելու կամ վարձակալության հանձնվելու դեպքում վաճառքի գնի կամ վարձակալության վճարի՝ շուկայական գինը գերազանցող մասը դիտվում է որպես կուսակցության օգտին կատարվող նվիրատվություն, և դրա նկատմամբ համապատասխանաբար կիրառելի են սույն օրենքի 24-րդ հոդվածի 1.2-րդ, 8.1-ին և 9-րդ մասերով սահմանված դրույթները: Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն բարձր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քսան տոկոսը գերազանցող չափով:

3. Կուսակցությունն իրավունք չունի զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, ինչպես նաև լինելու առևտրային իրավաբանական անձի հիմնադիր կամ մասնակից, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

4. Ազգային ժողովի ընտրություններում, ինչպես նաև համայնքների՝ համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու ընտրություններում կուսակցությունների դաշինքները կարող են կազմավորվել առնվազն երկու կուսակցության կողմից:

5. Կուսակցությունների համար երաշխավորվում է ընդդիմադիր գործունեություն իրականացնելու ազատություն, այդ թվում՝

1) հրապարակայնորեն ներկայացնել իր դիրքորոշումը պետական և հասարակական կյանքի տարբեր հարցերի վերաբերյալ.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, պաշտոնատար անձանց ներկայացնել անհատական և կոլեկտիվ հանրագրեր, որոնք համապատասխան մարմինների և պաշտոնատար անձանց կողմից օրենքով սահմանված կարգով ենթակա են քննարկման:

6. Կուսակցության կողմից հիմնադրված զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների գործունեության արդյունքում ստացված և կուսակցությանը փոխանցված եկամուտը կարող է օգտագործվել միայն կուսակցության կանոնադրությամբ և ծրագրով սահմանված նպատակների համար:

(21-րդ հոդվածը փոփ., լրաց., խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 22. Կուսակցության պարտականությունները

1. Կուսակցությունը պարտավոր է՝

1) պահպանել Սահմանադրությունը և օրենքները.

2) յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում՝ http://www.azdarar.am, հրապարակել ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ հաշվետվությունը: Կուսակցությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պահանջով պարտավոր է ներկայացնել հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ տեղեկություններ, փաստաթղթեր, այդ թվում՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, արժեթղթերի հետ կապված գործարքների վերաբերյալ տեղեկություններ, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկություններ, ինչպես նաև վարկային տեղեկատվություն:

2. Ընտրություններին մասնակցող կուսակցություններն ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար օրենքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հինգ օրվա ընթացքում, Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում կուսակցության (կուսակցությունների դաշինքները՝ դրանցում ընդգրկված կուսակցությունների) գույքի և եկամուտների մասին հայտարարագիր:

(22-րդ հոդվածը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 23. Կուսակցության գույքը

1. Կանոնադրությամբ և ծրագրով սահմանված նպատակների իրականացման համար կուսակցությունը սեփականության կամ այլ գույքային իրավունքով կարող է ունենալ ցանկացած գույք: Կուսակցությունը սեփականության իրավունքով չի կարող ունենալ այնպիսի գույք, որը հանված է շրջանառությունից:

2. Կուսակցության գույքը գոյանում է՝

1) կուսակցությանն անդամագրվելու համար միանվագ կատարվող վճարներից (մուտքի վճարներից), սահմանված չափով պարբերաբար կատարվող վճարներից (անդամավճարներից), եթե դրանք սահմանված են կուսակցության կանոնադրությամբ.

2) սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված նվիրատվություններից.

3) սույն օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված կարգով բյուջետային ֆինանսավորումից.

4) սույն օրենքով սահմանված գործունեությունից ստացված եկամուտներից:

3. Մեկ ֆիզիկական անձի կողմից անդամավճարի առավելագույն չափը տարեկան չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հազարապատիկը:

4. Կուսակցության անդամը սեփականության իրավունք չունի կուսակցությանը պատկանող գույքի նկատմամբ: Կուսակցության գույքի նվիրատվությունն արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5. Կուսակցությունն իր գույքով պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար, իսկ կուսակցության անդամը իր գույքով պատասխանատվություն չի կրում կուսակցության պարտավորությունների համար:

6. Կուսակցությունը կարող է բանկային հաշիվներ ունենալ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործող՝ Կենտրոնական բանկի լիցենզավորած բանկերում:

7. Կուսակցությունը բոլոր դրամական վճարումները կատարում է անկանխիկ հաշվարկներով:

(23-րդ հոդվածը լրաց. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 24. Կուսակցություններին կատարվող նվիրատվությունները

1. Կուսակցություններն իրավունք ունեն գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների, ներառյալ՝ փոխառությունների, երրորդ անձի կողմից կուսակցության պարտքը մարելու, պարտատիրոջ կողմից կուսակցության պարտքը ներելու, ինչպես նաև կուսակցության օգտին կատարվող այլ գործունեության տեսքով նվիրատվություններ ստանալու ֆիզիկական անձանցից, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

1.1. Նվիրատվություն են համարվում նաև կուսակցության օգտին անհատույց աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցումը, օգտագործման հանձնումը կամ նույն կամ համանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների համար գործող շուկայական արժեքից էականորեն ցածր գնով կուսակցության օգտին աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման կամ կուսակցությանը սեփականության իրավունքով գույքի փոխանցման կամ վարձակալության հանձնելու հետևանքով կուսակցության մոտ ձևավորված խնայողությունը (բնեղենով նվիրատվությունը): Գործող շուկայական արժեքից տարբերվող գինը համարվում է էականորեն ցածր, եթե այն գործող շուկայական արժեքից տարբերվում է նվազագույնը քսան տոկոսը գերազանցող չափով:

1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված բնեղենով նվիրատվությունները ենթակա են հաշվարկման իրենց շուկայական արժեքով և պետք է արտացոլվեն կուսակցության տարեկան հաշվետվության մեջ, իսկ դրանց արժեքը (գումարը՝ դրամական արտահայտությամբ՝ պայմանագրով նախատեսված արժեքի և շուկայական արժեքի տարբերության մասով) ներառվում է նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում:

2. Կուսակցությանը տրվող նվիրատվության, ինչպես նաև անդամավճարի և մուտքի վճարի ընդհանուր չափը՝ դրամական արտահայտությամբ, մեկ տարվա ընթացքում չի կարող գերազանցել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրհազարապատիկը, այդ թվում՝ մեկ ֆիզիկական անձի կողմից՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարհինգհարյուրապատիկը:

Սույն հոդվածով սահմանված՝ նվիրատվությունների առավելագույն սահմանաչափը չի ներառում նախընտրական քարոզչության ժամանակահատվածում նախընտրական հիմնադրամներին կատարված նվիրատվությունները:

Ֆիզիկական անձը կարող է սույն մասի առաջին պարբերությունում նշված նվիրատվության առավելագույն սահմանաչափի շրջանակներում նվիրատվություն կատարել մեկ և ավելի կուսակցության:

3. *(նախադասությունն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)* Կուսակցությանը նվիրատվության կարգով տրվող անշարժ գույքը չի կարող օտարվել նվիրատվության օրվանից առնվազն հինգ տարվա ընթացքում:

4. Նվիրատվություններ չեն թույլատրվում՝

1) օտարերկրյա պետություններից.

2) ցանկացած տեսակի իրավաբանական անձանցից, այդ թվում՝ օտարերկրյա իրավաբանական անձանցից և միջազգային կազմակերպություններից.

3) պետական և համայնքային բյուջեներից և (կամ) արտաբյուջետային միջոցներից, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի համաձայն կատարվող ֆինանսավորման.

4) պետական և համայնքային կազմակերպություններից, պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններից.

5) անանուն անձանցից.

6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանցից։

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, կուսակցության համար սահմանված նվիրատվության, անդամավճարի կամ մուտքի վճարի սահմանված չափը գերազանցող մասը կամ նվիրատվությունն ամբողջությամբ վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված չթույլատրված նվիրատվությունների ստացման դեպքում կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, դրանք փոխանցել պետական բյուջե:

7. Նվիրատվություն կատարող անձինք պարտավոր են նշել իրենց անունը, ազգանունը և անձը հաստատող փաստաթղթի համարը։

8. Կուսակցությանն օրենքով սահմանված դրամական հատկացումները կատարվում են միայն անկանխիկ։

8.1. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված նվիրատվությունների դեպքում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը գերազանցելիս կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, նվիրատվությունը, նվիրատվությանը համարժեք դրամական գումարը կամ նվիրատվության սահմանված չափը գերազանցող դրամական գումարը վերադարձնել նվիրատուին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ փոխանցել պետական բյուջե: Եթե նվիրատվությունն ստացվել է սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված չթույլատրված աղբյուրներից, ապա կուսակցությունը պարտավոր է ստանալուց հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, նվիրատվությունը, նվիրատվությանը համարժեք դրամական գումարը կամ նվիրատվության սահմանված չափը գերազանցող դրամական գումարը փոխանցել պետական բյուջե։

9. Սույն հոդվածի 4-րդ, 5-րդ և 8.1-ին մասերով սահմանված համապատասխան նվիրատվությունների ստացման և դրանք օրենքով սահմանված ժամկետներում համապատասխանաբար պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու դեպքում կուսակցությունը օրենքով սահմանված կարգով ենթակա է պատասխանատվության:

10. Սույն օրենքի իմաստով՝ նվիրատվություն չեն համարվում կամավորների կողմից անձնական գույքի օգտագործմամբ (բացառությամբ տրանսպորտային միջոցների և անշարժ գույքի) կատարված աշխատանքը կամ ծառայությունների մատուցումը, ինչպես նաև տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանն ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին և նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով հատուցված համապատասխան ողջամիտ ծախսերը:

Սույն հոդվածի իմաստով՝ աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը չի համարվում կամավոր աշխատանք, եթե դրանց կատարման համար պահանջվում է որոշակի մասնագիտական որակավորում, դրանց դիմաց աշխատանք կատարողը կամ ծառայություններ մատուցողը այլ դեպքերում սովորաբար ստանում է հատուցում, և աշխատանքի կամ ծառայության մատուցման տևողությունը գերազանցում է շաբաթական 20 ժամը: Այդ ծառայությունները համարվում են բնեղենով նվիրատվություն և ներառվում են նվիրատվությունների՝ սույն օրենքով սահմանված առավելագույն սահմանաչափում:

11. Կուսակցության հետ վարկային պայմանագիր կնքելու դեպքում այդ պայմանագրի պայմանները, ներառյալ՝ վարկի տոկոսադրույքը, պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից։

12. Վարկային պայմանագրի դեպքում արգելվում են վարկը կամ դրանց տոկոսներն ամբողջությամբ կամ մասնակի վճարելու պարտականությունից կուսակցությանն ազատելը (պարտքը ներելը) կամ պայմանագիրը կնքելուց հետո տոկոսադրույքը վերանայելը, որի արդյունքում տոկոսադրույքը շուկայականից էականորեն կնվազի, կամ այդ պայմանագրերի հետ փոխկապակցված գրավի պայմանագիրը վաղաժամկետ լուծելը կամ պայմանագրի պայմանների այնպիսի փոփոխությունները, որոնք կարող են դիտվել ակնհայտ անհավասար այլ անձանց հետ կնքվող համանման պայմանագրերի պայմանների համեմատ կամ փաստացի կարող են հավասարվել պարտքը ներելուն։ Սույն դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից նվիրատվություն և առաջացնել օրենքով սահմանված պատասխանատվություն։

13. Սույն հոդվածի 11-րդ և 12-րդ մասերի դրույթների խախտման հետևանքով կուսակցության ձեռք բերած եկամուտը (խնայողությունը) համարվում է օրենքով արգելված նվիրատվություն և ենթակա է փոխանցման պետական բյուջե՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան։ Սույն դրույթների խախտումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն։

14. Կուսակցության հետ բանկային ավանդի պայմանագիր կնքելիս պայմանագրի պայմանները, ներառյալ՝ բանկային ավանդի տոկոսադրույքը պետք է համապատասխանեն շուկայում գործող սովորական պայմաններին և չպետք է էականորեն տարբերվեն այլ անձանց հետ նույնանման պայմաններում կնքվող պայմանագրերի պայմաններից։ Եթե բանկային ավանդի տոկոսադրույքը էականորեն գերազանցում է համանման պայմանագրերի դեպքում առաջարկվող տոկոսադրույքը, ապա ավանդի տոկոսների՝ համանման պայմանագրերի համեմատ էականորեն գերազանցող մասը դիտվում է որպես օրենքով չթույլատրված աղբյուրից նվիրատվություն և ենթակա է փոխանցման պետական բյուջե՝ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան։ Սույն մասի դրույթների խախտումը կարող է դիտվել որպես իրավաբանական անձի կողմից նվիրատվություն և առաջացնել օրենքով սահմանված պատասխանատվություն։

(24-րդ հոդվածը խմբ., լրաց., փոփ. 29.12.20 ՀՕ-1-Ն, լրաց. 07.05.21 ՀՕ-203-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Գ Լ ՈՒ Խ 5

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 25. Կուսակցություններին հանրային աջակցության ձևերը

1. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները օրենքով սահմանված կարգով բոլոր կուսակցություններին հավասար և ոչ խտրական պայմաններով ցուցաբերում են հետևյալ աջակցությունը.

1) ապահովում են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությամբ հիմնադրված զանգվածային լրատվության միջոցներից օգտվելու հնարավորությունը.

2) կուսակցություններին տրամադրում են իրենց պատկանող շինություններ, կապի միջոցներ, որոնցից օգտվելու առաջնահերթ իրավունք ունեն Ազգային ժողովի ընտրություններում մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցությունները.

3) նախընտրական քարոզչություն իրականացնելու համար կուսակցություններին ու նրանց տարածքային ստորաբաժանումներին Հայաստանի Հանրապետության ընտրական

օրենսգրքով սահմանված կարգով ապահովում են համապատասխան հնարավորություններով:

2. Պետական մարմինները սույն օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով ֆինանսավորում են կուսակցությունների գործունեությունը:

3. Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում կուսակցությունների՝ օրենքով սահմանված դեպքերում հաշվետվությունների հրապարակումը, ինչպես նաև հայտարարություններն ու ծանուցումներն իրականացվում են անվճար:

(25-րդ հոդվածը լրաց. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 26. Կուսակցությունների պետական ֆինանսավորումը

1. Կուսակցությունների պետական ֆինանսավորումը (պետական սուբսիդավորումը) իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նպատակ ունենալով խթանելու որոշակի հանրային աջակցություն ունեցող և եկամտի այլ էական աղբյուրներ չունեցող կուսակցությունների կենսունակությունն ու ինքնուրույնությունը: Այդ ծախսերն արտացոլվում են պետական բյուջեում առանձին հոդվածով:

2. Պետական ֆինանսավորումը կազմված է երկու մասից՝ պետական ընդհանուր ֆինանսավորում և պետական նպատակային ֆինանսավորում: Յուրաքանչյուր տարվա համար պետական ընդհանուր ֆինանսավորումը կուսակցություններին տրամադրվում է կիսամյակային սկզբունքով, բայց ոչ շուտ, քան Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության տարեկան հաշվետվության ստուգումը: Պետական նպատակային ֆինանսավորումը յուրաքանչյուր տարվա համար տրամադրվում է միանվագ՝ պայմանավորված կուսակցությունների կառուցվածքով և գործունեությամբ:

3. Պետական ֆինանսավորում հատկացվում է այն կուսակցությանը, որի ընտրական ցուցակն Ազգային ժողովի վերջին ընտրությունների ժամանակ ստացել է քվեարկությանը մասնակցած բոլոր կուսակցությունների ընտրական ցուցակների օգտին կողմ տրված ձայների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն երկու տոկոսը: Պետական ֆինանսավորումը հատկացվում է միայն այն կուսակցությունների դաշինքներին, որոնք հաղթահարել են «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված ընտրական արգելապատնեշը: Պետական ֆինանսավորում չի հատկացվում այն կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությանը, որի ակտիվների արժեքը, ըստ կուսակցության տարեկան հաշվետվության, գերազանցում է պետական բյուջեով տվյալ տարում բոլոր կուսակցությունների պետական ֆինանսավորման համար նախատեսված ընդհանուր գումարի հնգապատիկը:

4. Պետական բյուջեի միջոցները սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված շեմը հաղթահարած յուրաքանչյուր կուսակցությանը բաշխվում են հետևյալ բանաձևով.

1) 2-ից մինչև 5 տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց.

2) 5-ից մինչև 20 տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ մինչև 5 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, իսկ 5-ից մինչև 20 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կեսի չափով.

3) 20 և ավելի տոկոս ձայներ ստանալու դեպքում՝ մինչև 5 տոկոսի սահմաններում տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափով, 5-ից մինչև 20 տոկոսի սահմաններում՝ յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի կեսի չափով, իսկ 20 տոկոսը գերազանցող սահմաններում

տրված յուրաքանչյուր ձայնի դիմաց՝ օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի մեկ քառորդի չափով։

5. Յուրաքանչյուր կուսակցության համար պետական ընդհանուր ֆինանսավորման ծավալը հավասար է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված բանաձևի հաշվարկով ստացված գումարի 60 տոկոսին։

6. Յուրաքանչյուր կուսակցության համար պետական նպատակային ֆինանսավորման ծավալը հավասար է սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված բանաձևի հաշվարկով ստացված գումարի 40 տոկոսին։

7. Եթե հաշվետու տարում կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը գերազանցում է 40 տոկոսը, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման կեսը։ Եթե կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը կազմում է 20-40 տոկոս, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը։ Եթե կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի կազմում պակաս ներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը պակաս է 20 տոկոսից, ապա կուսակցությանը պետական նպատակային ֆինանսավորման կեսը չի տրամադրվում։ Սույն մասով նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է կանանց, երիտասարդներին, հաշմանդամություն ունեցող անձանց և ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին կուսակցության գործունեության մեջ ներգրավելուն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով։

8. Եթե կուսակցությունը հաշվետու տարում ունեցել է տարածքային ստորաբաժանումներ Հայաստանի Հանրապետության մարզերի առնվազն կեսում, ապա կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մեկ քառորդ մասը։ Սույն մասով նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության մարզերում կուսակցության տարածքային ներկայացվածության և տարածքային ստորաբաժանումների գործունեության ապահովման նպատակով։

9. Կուսակցությանը տրամադրվում է պետական նպատակային ֆինանսավորման մյուս քառորդ մասը, եթե կուսակցությունը հաշվետու տարում իրականացրել և հրապարակել է կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտություններ։ Սույն մասով նախատեսված նպատակային ֆինանսավորումը կուսակցությանը տրամադրվում է կուսակցության գաղափարախոսության, ծրագրային նպատակների և հանրային քաղաքականության հարցերի մասին հետազոտությունների անցկացման, հրապարակման ու տարածման նպատակով։ Պետական նպատակային ֆինանսավորման միջոցով իրականացված հետազոտությունների արդյունքները ենթակա են հրապարակման։

10. Հաշվետու տարում սույն հոդվածի 7-9-րդ մասերով սահմանված՝ նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը։

11. Սույն հոդվածի 7-9-րդ մասերով նախատեսված նպատակային ֆինանսավորման միջոցների օգտագործումը պետք է արտացոլվի կուսակցության տարեկան հաշվետվության մեջ՝ այն ներկայացնելով հաշվետվությանը կից հավելվածով։ Եթե հաշվետվության ստուգումից հետո պարզվում է, որ կուսակցությունը չի կատարել կամ ոչ պատշաճ է կատարել հաշվետու տարում սույն հոդվածի 7-9-րդ մասերով նախատեսված պահանջները կամ կատարել է նշված պահանջներից միայն մեկը կամ մի քանիսը, ապա հաշվետու տարվան հաջորդող տարվա համար նպատակային ֆինանսավորումը համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասամբ (չկատարված պահանջների մասով) չի տրամադրվում։ Պետական նպատակային ֆինանսավորումը տրամադրելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ընդունում է որոշում,

որի մասին ընդունման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում, տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

12. Եթե կուսակցությունն իր գույքը հանձնում է վարձակալության կամ բանկային ավանդից ստանում է տոկոսներ կամ եկամուտներ է ստանում իր հիմնադրած զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեությամբ, ապա հաջորդ տարում կուսակցությանը տրվող պետական ֆինանսավորումը նվազեցվում է վարձակալության, բանկային ավանդի կամ իր հիմնադրած զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեությամբ ստացված և կուսակցությանը փոխանցված եկամտի չափով: Եթե տվյալ տարում գույքի վարձակալության, բանկային ավանդի կամ կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչության գործունեությամբ կուսակցության ստացած եկամուտը գերազանցում է պետական ֆինանսավորումը, ապա հաջորդ տարվա համար կուսակցության պետական ֆինանսավորումը դադարեցվում է:

13. Սույն օրենքով նախատեսված՝ կուսակցության գույքի վարձակալությունից, բանկային ավանդից կամ կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցի կամ հրատարակչական կազմակերպության գործունեությամբ ստացված և կուսակցությանը փոխանցված եկամտի մասին տեղեկատվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը կուսակցության տարեկան հաշվետվության ստուգումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, փոխանցում է Հայաստանի Հանրապետության կառավարություն:

14. Պետական ֆինանսավորման միջոցները կուսակցությունների ընտրական դաշինքին մասնակցող կուսակցությունների միջև բաշխվում են հավասարապես, եթե այլ բան նախատեսված չէ կուսակցությունների ընտրական դաշինքի որոշմամբ:

15. Սույն հոդվածով նախատեսված՝ կուսակցությունների պետական ֆինանսավորումն իրականացվում է տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամանակահատվածում և դադարեցվում Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը: Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման ամսվա համար կուսակցության պետական ֆինանսավորման հաշվարկն իրականացվում, և ֆինանսավորումը փոխանցվում է ըստ օրերի քանակի՝ մինչև տվյալ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ավարտման օրը:

16. Կուսակցության վերակազմակերպման, լուծարման պետական գրանցման օրվանից, ինչպես նաև կուսակցության գործունեության արգելման մասին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից պետական բյուջեի միջոցների հատկացումը դադարեցվում է:

(26-րդ հոդվածը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Գ Լ ՈՒ Խ 6

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ, ԱՈՒԴԻՏԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄԸ

(վերնագիրը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

Հոդված 27. Կուսակցությունների հաշվետվությունները

1. Կուսակցությունները պետական մարմիններին ֆինանսական ու հաշվապահական հաշվետվություններ են ներկայացնում իրավաբանական անձանց համար օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

2. Կուսակցությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակել հաշվետու տարվա ընթացքում կուսակցության ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի մասին

հաշվետվությունը (այսուհետ՝ տարեկան հաշվետվություն), իսկ սույն օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դրա վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը:

Հաշվետվությունը ներառում է նաև սույն օրենքի 24-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված՝ կուսակցություններին և նրանց անդամներին տեղական կամ միջազգային համագործակցության շրջանակներում ստացած նյութական և ոչ նյութական աջակցության նպատակով հատուցված (ներառյալ՝ դասընթացների, ճանապարհածախսի հատուցում և այլն) ծախսերի մասին տեղեկություններ:

3. Կուսակցությունն իր հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է հաշվետվությունը և դրա հրապարակման փաստը վկայող ապացույցը ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4. Հաշվետու տարվա ընթացքում կուսակցության հաշվետվությունը պետք է տվյալներ պարունակի կուսակցության հաշվում մուտք արված միջոցների աղբյուրների և ծավալի, այդ միջոցների ծախսման, ինչպես նաև ունեցած գույքի մասին՝ նշելով դրա արժեքը:

5. Կուսակցության ստացած նվիրատվությունների աղբյուրը՝ անկախ արժեքից, նշվում է կուսակցության հաշվետվությունում:

6. Կուսակցության կողմից նախընտրական քարոզչության նախապատրաստման և իրականացման համար ծախսված միջոցների հաշվառումը կատարվում է առանձին:

7. Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Կուսակցություններն իրավունք ունեն իրենց հաշվետվությանը կից ներկայացնելու լրացուցիչ բացատրական նյութեր:

8. Կուսակցության տարեկան հաշվետվությունը, ի թիվս այլ տեղեկությունների, պետք է պարունակի կուսակցության՝

1) մուտքերը՝

ա. մուտքի վճարներ,

բ. անդամավճարներ,

գ. ֆիզիկական անձանց նվիրատվություններ,

դ. օրենքով սահմանված կարգով ստացված բյուջետային ֆինանսավորում,

ե. կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների՝ հաշվետու տարում կուսակցությանը փոխանցած միջոցները՝ առանձին նշելով զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների՝ հաշվետու տարվա գործունեությամբ ստացված շահույթը,

զ. տեղական և միջազգային համագործակցության շրջանակներում կուսակցությանն ու նրա անդամներին ուսումնառության, վերապատրաստման, համաժողովներին, սեմինարներին ու նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցության նպատակով հատուցված համապատասխան միջոցներ,

է. վարկեր և փոխառություններ,

ը. բանկային ավանդների գծով ստացված տոկոսներ,

թ. կուսակցության օգտին անհատույց կատարված աշխատանքներ և մատուցված ծառայություններ,

ժ. քաղաքացիաիրավական այլ գործարքներից՝ կուսակցության գույքի առքուվաճառքից, վարձակալությունից և օրենքով չարգելված այլ գործարքներից ստացված միջոցներ,

ժա. այլ մուտքեր.

2) ելքերը՝

ա. աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված այլ վճարումներ, քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա ծառայությունների մատուցման վճարներ,

բ. հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ,
գ. կոմունալ վճարներ,
դ. գույքի վարձակալության վճարներ,
ե. ապրանքանյութական արժեքներ ձեռք բերելու համար կատարված վճարումներ,
զ. տրանսպորտային ծախսերի գծով ելքեր,
է. գործուղման ծախսերի գծով ելքեր,
ը. այլ ելքեր.
3) կուսակցության գույքը՝
ա. անշարժ գույք (շենք, շինություն, հողամաս և այլն),
բ. տրանսպորտային միջոցներ.
4) կուսակցության պարտավորությունները՝
ա. բանկերի հանդեպ ունեցած պարտավորություններ,
բ. վարկային կազմակերպությունների հանդեպ ունեցած պարտավորություններ,
գ. փոխատուի հանդեպ ունեցած պարտավորություններ,
դ. այլ պարտավորություններ:
(27-րդ հոդվածը խմբ., լրաց. 29.12.20 ՀՕ-1-Ն, խմբ. 04.05.22 ՀՕ-115-Ն)
(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 28. Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտը
(վերնագիրը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

1. Այն կուսակցությունների տարեկան հաշվետվությունները, որոնց՝ սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված մուտքերը կամ ելքերը հաշվետու տարվա ընթացքում գերազանցել են օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը, ենթակա են պարտադիր աուդիտի:
2. Սույն օրենքով սահմանված կարգով պետական բյուջեից պետական ֆինանսավորում ստացած կուսակցությունների տարեկան հաշվետվությունները ենթակա են պարտադիր աուդիտի՝ անկախ հաշվետու տարում սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված մուտքերի կամ ելքերի չափից:
3. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված դեպքերում սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված մուտքերի կամ ելքերի չափը հաշվարկելիս դրանում չի ներառվում սույն օրենքի 27-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի «ե» ենթակետով սահմանված՝ կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների՝ հաշվետու տարվա գործունեությամբ ստացված ընդհանուր շահույթը: Հաշվարկման ենթակա են միայն կուսակցության հիմնադրած զանգվածային լրատվության միջոցների և հրատարակչությունների՝ հաշվետու տարում կուսակցությանը փոխանցած միջոցները:
4. Սույն հոդվածով նախատեսված պարտադիր աուդիտը ֆինանսավորվում է պետական բյուջեի միջոցներից և իրականացվում բաց մրցույթով ընտրված աուդիտորական կազմակերպությունների կողմից: Պարտադիր աուդիտի ենթակա և պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների աուդիտի ֆինանսավորման գումարը նվազեցվում է կուսակցությանը կամ կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությանը հատկացվող պետական ընդհանուր ֆինանսավորման գումարից: Աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով անցկացվող բաց մրցույթը կազմակերպում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ իր որոշմամբ սահմանված կարգով:
5. Կուսակցությունները հաշվետու տարվան հաջորդող յուրաքանչյուր տարում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում տարեկան հաշվետվության պարտադիր աուդիտի ենթակա լինելու հանգամանքը պարզելու, ինչպես նաև աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար հայտարարվող բաց մրցույթի կազմակերպման

նպատակով անհրաժեշտ տեղեկություններ, որոնց ցանկը, ներկայացման ձևաթուղթը և ժամկետները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

(28-րդ հոդվածը խմբ. 29.12.20 ՀՕ-1-Ն, փոփ., լրաց., խմբ. 04.05.22 ՀՕ-115-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 28.1. Կուսակցության ղեկավար մարմնի պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականությունը

1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ նաև՝ հայտարարատու պաշտոնատար անձինք) պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր, որի ձևանմուշը և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

2. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև տարեկան հայտարարագրեր:

3. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, բացառությամբ հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից իրենց գույքի և եկամուտների վերաբերյալ տվյալներ ներկայացնելու պարտականության և պատասխանատվության վերաբերյալ դրույթների:

4. Կուսակցությունն իր ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին եռօրյա ժամկետում ծանուցում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին՝ տրամադրելով համապատասխան ակտի պատճենը:

5. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամներն ազատվում են սույն հոդվածով նախատեսված հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից, եթե «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածի իմաստով հանդիսանում են հայտարարատու պաշտոնատար անձ:

6. Եթե սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված անձը պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը ներկայացնելուց հետո շարունակում է պաշտոնավարել որպես կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ որպես այդ մարմնի անդամ, ապա նա կուսակցությունում պաշտոն ստանձնելու հայտարարագիր չի ներկայացնում: Այդ դեպքում անձն օրենքով սահմանված կարգով ներկայացնում է տարեկան հայտարարագիր:

7. Եթե սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված անձը պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու հայտարարագիրը ներկայացնելուց հետո մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ն ազատվում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում՝ այդ մարմնի անդամի պաշտոնից, ապա պաշտոնը դադարեցնելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով է ներկայացնում կուսակցության պաշտոնի դադարեցման հայտարարագիր:

8. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձը «Հանրային ծառայության մասին» օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված պաշտոնի նշանակման դեպքում չի ազատվում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարագիր ներկայացնելու պարտականությունից:

(28.1-ին հոդվածը լրաց. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Գ Լ ՈՒ Խ 7

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 29. Կուսակցությունների միջազգային գործունեությունը

1. Կուսակցությունն իրավունք ունի կապեր հաստատելու և պահպանելու օտարերկրյա պետությունների քաղաքական կուսակցությունների, հասարակական միավորումների, միջազգային կազմակերպությունների հետ, կնքելու համագործակցության մասին համաձայնագրեր և իրականացնելու այլ միջոցառումներ, որոնք չեն հակասում Սահմանադրությանը, միջազգային պայմանագրերին և օրենքներին:

2. Կուսակցություններն իրավունք ունեն անդամակցելու միջազգային միությունների:

Գ Լ ՈՒ Խ 8

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 30. Կուսակցությունների գործունեության նկատմամբ ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինը

1. Կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունը, ներառյալ՝ կուսակցությունների տարեկան հաշվետվության ստուգումն իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ սույն օրենքով և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված կարգով:

2. *(մասն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)*

(30-րդ հոդվածը խմբ., փոփ. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Գ Լ ՈՒ Խ 9

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԱՐԳԵԼՈՒՄԸ, ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Հոդված 31. Կուսակցության գործունեության կասեցման և արգելման կարգը

1. Կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

2. Կուսակցության գործունեության կասեցման կամ արգելման հարցով սույն օրենքով նախատեսված հիմքերով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 32. Կուսակցության գործունեության կասեցումը

1. Կուսակցության գործունեությունը կարող է կասեցվել, եթե կուսակցությունը՝

1) իր գործունեության ընթացքում թույլ է տվել օրենքի կոպիտ խախտում.

2) *(կետն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)*

2. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ օրենքի կոպիտ խախտում են համարվում՝

1) կուսակցության կողմից օրենքով չթույլատրված կամ օրենքով սահմանված չափը գերազանցող նվիրատվությունները օրենքով սահմանված ժամկետում պետական բյուջե կամ նվիրատուին փոխանցելու կամ կուսակցության տարեկան հաշվետվությունն օրենքով սահմանված ժամկետում և կարգով հրապարակելու կամ պետական լիազոր մարմին ներկայացնելու կամ օրենքով սահմանված՝ տարեկան հաշվետվության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրելու օրենքով սահմանված կարգը դիտավորությամբ խախտելը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով պատասխանատվության ենթարկվելուց և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կուսակցության գործունեությունը կասեցնելու հնարավորության վերաբերյալ գրավոր նախազգուշացվելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, խախտումը չվերացնելը կամ

2) կուսակցության հիմնադրման կամ պետական գրանցման ժամանակ օրենքի այնպիսի խախտում թույլ տալը, որը, եթե հայտնի լիներ պետական գրանցման պահին, կուսակցությունը չէր գրանցվի:

3. *(մասն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)*

4. *(մասն ուժը կորցրել է 29.12.20 ՀՕ-1-Ն)*

5. Վարչական պատասխանատվության ենթարկելուց հետո՝ երեսնօրյա ժամկետում, խախտումը չվերացնելու դեպքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին և Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

6. Պետական լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության կառավարությանը անհապաղ տեղեկացնում է կուսակցության հիմնադրման կամ պետական գրանցման ժամանակ օրենքի այնպիսի խախտման մասին, որը եթե հայտնի լիներ պետական գրանցման պահին, կուսակցությունը չէր գրանցվի:

7. Կուսակցության գործունեությունը կասեցվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ:

8. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքերով կուսակցության կողմից կասեցման հիմքերի վերացման վերաբերյալ ապացույցները ներկայացվում են պետական լիազոր մարմին, որը գնահատում է կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացված լինելու հանգամանքը: Պետական լիազոր մարմինը կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացված լինելու կամ դրանց առկայության մասին եզրակացությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան դիմած մարմնին: Կուսակցության գործունեությունը վերսկսվում է կասեցման հիմք հանդիսացող խախտումները վերացնելու դեպքում:

9. Կասեցման ժամանակահատվածում կուսակցությունը չի կարող իրականացնել որևէ գործունեություն, այդ թվում՝ ստանալ սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված որևէ նվիրատվություն, բացառությամբ անդամավճարներ հավաքելու, պայմանագրային, այդ թվում՝ աշխատանքային պարտավորությունները կատարելու, հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումներ վճարելու հետ կապված գործողությունների, ինչպես նաև այն գործողությունների, որոնք անհրաժեշտ են կասեցման համար հիմք հանդիսացող խախտումները վերացնելու և կուսակցության՝ որպես իրավաբանական անձի բնականոն գործունեությունն ապահովելու համար:

10. Կուսակցության գործունեության կասեցումը հիմք չէ այդ կուսակցության առաջադրմամբ ընտրված պատգամավորի, համամասնական ընտրակարգով ընտրված՝ համայնքի ավագանու անդամի լիազորությունները կամ Ազգային ժողովում տվյալ կուսակցությունը ներկայացնող խմբակցության գործունեությունը դադարեցնելու համար:

(32-րդ հոդվածը փոփ. 18.06.20 ՀՕ-334-Ն, խմբ., փոփ., լրաց. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 33. Կուսակցության գործունեության արգելումը

1. Սահմանադրության 46-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արգելման ենթակա է այն կուսակցությունների գործունեությունը, որոնք քարոզում են սահմանադրական կարգի բռնի տապալում կամ բռնություն են կիրառում սահմանադրական կարգը տապալելու նպատակով:

2. Կուսակցության գործունեության արգելումը հիմք չէ այդ կուսակցության առաջադրմամբ ընտրված պատգամավորի, համամասնական ընտրակարգով ընտրվող համայնքների ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու կամ Ազգային ժողովում տվյալ կուսակցությունը ներկայացնող խմբակցության գործունեությունը դադարեցնելու համար:

3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ կուսակցության գործունեությունը արգելելու դեպքում կուսակցության գործունեությունը համարվում է դադարեցված, և այն ենթակա է լուծարման:

(33-րդ հոդվածը փոփ. 18.06.20 ՀՕ-334-Ն, լրաց. 29.12.20 ՀՕ-1-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 34. Կուսակցության վերակազմակերպումը

1. Կուսակցությունը կարող է կուսակցության համագումարի՝ սույն օրենքով սահմանված կարգով ընդունված որոշմամբ վերակազմակերպվել (միաձուլվել, միանալ, բաժանվել կամ առանձնանալ) այլ կուսակցության:

2. Կուսակցության վերակազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի կանոններին համապատասխան:

Հոդված 35. Կուսակցության լուծարումը և լուծարման հետևանքները

1. Կուսակցությունը լուծարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և օրենքով սահմանված կարգով:

2. Կուսակցության լուծարման դեպքում պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է կուսակցության կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, դրա անհնարինության դեպքում դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության: Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում կուսակցության լուծարումից հետո դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության:

3. Կուսակցությունը կարող է դադարեցնել իր գործունեությունը լուծարման միջոցով՝ կուսակցության համագումարի որոշմամբ:

4. Եթե կուսակցության լուծարման համար հրավիրված համագումարն իրավազոր չէ, ապա կուսակցության լուծարման մասին որոշումն ընդունում է կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմինը: Իսկ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի իրավազոր չլինելու դեպքում կուսակցությունը լուծարվում է կուսակցության հիմնադիրներից մեկի որոշմամբ: Այս դեպքում կուսակցության լուծարման մասին որոշումը համարվում է ընդունված, եթե որոշումը կայացնելու օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կուսակցության համագումարը կամ մշտապես գործող ղեկավար մարմինը այլ որոշում չի կայացրել:

5. Եթե Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշմամբ արգելվել է կուսակցության գործունեությունը, ապա կուսակցության նկատմամբ սկսվում է լուծարման գործընթաց: Այս դեպքում լուծարային հանձնաժողովի իրավասություններն

իրականացնում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստեղծված հանձնաժողովը:

(35-րդ հոդվածը փոփ. 29.12.20 ՀՕ-1-Ն, խմբ. 23.03.22 ՀՕ-60-Ն)

(29.12.20 ՀՕ-1-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

ԳԼՈՒԽ 10

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 36. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի ապրիլի 1-ից:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի:

3. «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը Հանրապետության նախագահի մասով ուժը կորցնում է նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

4. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները Հանրապետության նախագահի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների, Հաշվեքննիչ պալատի անդամների և Կենտրոնական բանկի խորհրդի անդամների մասով ուժի մեջ են մտնում նորընտիր Հանրապետության նախագահի կողմից իր պաշտոնի ստանձնման օրը:

5. Սույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

6. Կուսակցության պետական գրանցման համար մինչև 2017 թվականի փետրվարի 1-ը ներկայացված դիմումների վրա տարածվում են «Կուսակցությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-410-Ն օրենքով սահմանված՝ պետական գրանցման մասին դրույթները: Եթե կուսակցության պետական գրանցման համար 2017 թվականի փետրվարի 1-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված դիմումները չեն համապատասխանում սույն օրենքով սահմանված պահանջներին, ապա պետական գրանցում իրականացնող մարմինը դիմումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, որոշում է կայացնում դիմումը վերադարձնելու մասին՝ նշելով սույն օրենքի այն դրույթները, որոնց չի համապատասխանում պետական գրանցման դիմումը: Սույն օրենքի պահանջներին չհամապատասխանելու հիմքով վերադարձված դիմումները հիմնադիր համագումարի անցկացումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին ներկայացվելու դեպքում պետական տուրք չի գանձվում:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Ս. Սարգսյան**

2016 թ. դեկտեմբերի 30
Երևան
ՀՕ-224-Ն